



**ԵՓՄԻՀ ԱՄՍԱԳԻՐ ԹԻՎ 38**

**(հունվար 2015)**

**2015թ. ԵՎՐՈՊԱՅԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ (CCBE) (ԱՑՍՈՒՀԵՏ՝ ԵՓՄԻՀ) ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ - ԵՎՐՈՊԱՅԻ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՕՐԸ - ԱԱՀ (ԱՎԵԼԱՑՐԱՍ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿ) - ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ - ԻՐԱՎԱԲԱՆ ԳՏՆԵԼՈՒ ՈՐՈՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ, ՎԻՂԵՈԿՈՆՏԵՐԱՆՍ, ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ, ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ, ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՏԻԱ**

«Որպես այս տարվա ԵՓՄԻՀ նախագահ՝ կցանկանայի շնորհավորել բոլորին Նոր տարվա կապակցությամբ:

Նախագահությանս նպատակները հաշվի են առնում իրավաբանի մասնագիտության ապագան և Եվրոպայի իրավաբանների, փաստաբանական կառույցների և իրավական հասարակությունների համախմբվածության անհրաժեշտությունը՝ մեր մասնագիտության հիմնական արժեքները երաշխավորելու և Եվրոպայում իրական ընդհանուր արդարադատության միջավայր ստեղծելու համար:

Այդ կապակցությամբ, ԵՓՄԻՀ-ն տեղեկացնում է մեր անդամներից շատերի ցանկության մասին՝ թարգմանելու մեր ամսագիրն իրենց մայրենի լեզվով և դրանով ավելի բարձրացնելով մեր կազմակերպությանն աջակցելը ազգային մակարդակում: Մեր անդամների համար ամսագրի թարգմանությունը պարզեցնելու նպատակով մենք այն կհրապարակենք ամսեկան կտրվածքով:

Շեշտը դնելով տվյալ ժամանակահատվածում ԵՓՄԻՀ-ի գործողությունների, միջոցառումների և հրապարակումների վրա՝ մենք կաշխատենք պահպանել ամսագիրը տեղեկություններով լի և ուշագրավ մեր ընթերցողների համար: Մենք ողջունում ենք Ձեր մասնակցությունը մեր քննարկումներին, դուք կարող եք կապ հաստատել մեզ հետ, ամսագրի ցանկացած թեմայի վերաբերյալ քննարկում կազմակերպել Թվիթերի միջոցով (@ccbeinfo), կամ էլ փոստով (ccbe@ccbe.eu).

Մեր անդամ միությունների և իրավական հասարակության միջոցով ԵՓՄԻՀ-ն ներկայացնում է մոտ 1 միլիոն Եվրոպացի իրավաբանների: Եկեք մեր նպատակը դարձնենք այն, որ 2015 թվականին կապ հաստատենք նրանցից յուրաքանչյուրի հետ»:

**Մարիա Սլազակ  
ԵՓՄԻՀ-ի նախագահ**



2015 թվականի նոյեմբերին ԵՓՄԻՀ-ի լիագումար նիստի ժամանակ ԵՓՄԻՀ պատվիրակությունը ընտրեց ԵՓՄԻՀ-ի նախագահությունը հետևյալ կազմով՝



Նախագահ  
**Մարիա Սլազակ**  
(Լեհաստան)

Առաջին տեղակալ  
**Միշել Բենիչու**  
(Ֆրանսիա)

Երկրորդ տեղակալ  
**Ռուֆվեն Գեմմել**  
(Մեծ Բրիտանիա)

Երրորդ տեղակալ  
**Անտոնին Մոկրի**  
(Չեխիա)

## ԱՌԱՋԻՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՕՐԸ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑԱԿ

Եվրոպայի իրավական հասարակությունը և միությունները 2014 թվականի դեկտեմբերի 10-ը սահմանեցին որպես Եվրոպայի իրավաբանների առաջին օր: Ազգային օր՝ նշելու իրավունքի գերակայությունը և իրավական մասնագիտության հատուկ դերը դրա պաշտպանության գործում, ինչպես նաև իրավաբանների ընդհանուր արժեքները և դրանց ներդրումը արդարադատության համակարգում:

Այս միջոցառումը համընկավ Մարդու իրավունքների միջազգային օրվա հետ, այն առումով, որ իրավաբանի օրվա ընտրված «Տեղեկատվության կառավարական վերահսկողությունը» թեման առնչվում էր քաղաքացիների՝ արդարության հասանելիության և իրավունքի գերակայության հիմնական իրավունքների իրացման հետ: Այս թեմայով ԹՎԻԹԵՐԻ (@CCBEinfo) առցանց քննարկման/բանավեճի միջոցով քննարկումներ տեղի ունեցան 17 տարբեր երկրներում:

2015 թվականի հաջորդ «Իրավաբանների օրվա» թեման և անցկացման ամսաթիվը կորոշվի փետրվարին՝ Լոնդոնում կայանալիք մշտական հանձնաժողովի ժամանակ: Առավել մանրամասն համապատասխան ազգային միջոցառումներին և դրանց վերաբերյալ փաստաթղթերին կարող եք ծանոթանալ այստեղ՝ [www.ccbe.eu/lawyersday](http://www.ccbe.eu/lawyersday)

## ԲԵԼԳԻԱՅԻ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԸ ԱԱՀ-Ի ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՎ ՀԱՍԵԼ ԵՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԵՓՄԻՀ-ի աջակցությամբ Բելգիայի Միությունը շարունակում է իր պայքարը ԱԱՀ-ից ազատված լինելու դրույթի վերացման դեմ, որը Բելգիայի իրավաբանների համար սահմանվել էր մինչև 2013 թվականի վերջը: Իրավաբանների պնդմամբ, դա հակասում է Բելգիայի Սահմանադրությանը, Եվրոպական միության հիմնական իրավունքների կանոնադրությանը և Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության Եվրոպական Կոնվենցիային: Բելգիայի Սահմանադրական դատարանը իր որոշումը կայացրել է 2014թ նոյեմբերի 13-ին: Դատարանը որոշել է Եվրոպական միության արդարադատության դատարանի նախնական դիտարկմանը ներկայացնել որոշ հարցեր, որից հետո միայն գործի վերաբերյալ կկայացվի վերջնական որոշում: Բելգիայի ՄԴ որոշումը այժմ ներկայացված է Արդարադատության Եվրոպական դատավորներին Լյուքսեմբուրգում: Ավելին կարելի կարդալ (ֆրանսերեն լեզվով) այստեղ՝ <http://www.infos-tva-avocats.be/>



**ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԵՎՐՈՊԱՅԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ ԸՆԴՈՒՆԵԼ ԵՆ  
ՄԻԱՄՆԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Նոյեմբերի 26-ին, նախքան եվրոպական իրավաբանների օրը, հոդված 29-ի ուժով տվյալների պաշտպանության թեմայով աշխատող խումբը հաստատել է միասնական հայտարարություն, որով անձնական տվյալների պաշտպանությունը ճանաչել է որպես հիմնարար իրավունք: Այդ աշխատանքային փաստաթուղթը վերլուծում է Եվրոպական տեղեկատվության վերահսկողության իրավական դաշտը:

Կարդալ ավելին (անգլերեն) այստեղ՝

- [http://ec.europa.eu/justice/data-protection/article-29/documentation/opinion-recommendation/files/2014/wp227\\_en.pdf](http://ec.europa.eu/justice/data-protection/article-29/documentation/opinion-recommendation/files/2014/wp227_en.pdf)
- [http://ec.europa.eu/justice/data-protection/article-29/documentation/opinion-recommendation/files/2014/wp228\\_en.pdf](http://ec.europa.eu/justice/data-protection/article-29/documentation/opinion-recommendation/files/2014/wp228_en.pdf)



**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ  
ԱՐԴՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԹԱԿԻ ՀԵՆՔԻ ՎՐԱ  
«ԻՐԱՎԱԲԱՆԻ ՈՐՈՆՈՒՄ» ՈՐՈՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ  
ՄԵԿՆԱՐԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

2009 թվականին ԵՓՄԻՀ-ի կողմից նախաձեռնված «Իրավաբանի որոնում» որոնողական համակարգը հնարավորություն է տալիս ինտերնետի միջոցով և համաձայն ընդհանուր որոնողական դաշտերի (ներառյալ՝ գտնվելու վայրը, պրակտիկայի ոլորտը, մասնագիտությունը և տիրապետող լեզուները) իրականացնել իրավաբանի միջսահմանային որոնումներ: «Իրավաբանի որոնում» որոնողական համակարգի առաջին թողարկումը թույլ է տալիս օգտատերերին իրավաբան փնտրել 20 երկրներում՝ ապագայում դրանց համալրման հնարավորությամբ: Տես՝ համակարգի ինտերնետ կայքը՝ <https://e-justice.europa.eu/external.do?idTaxonomy=334&plang=en&init=true>



**ԵՓՄԻՀ-Ն ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ Է ՄՇԱԿԵԼ  
ՄԻՋՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ  
ՎԻԴԵՈԿՈՆՖԵՐԱՆՍՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Միջսահմանային գործերում վիդեոկոնֆերանսների համակարգի կիրառումը, որը կառավարությունները արդեն իսկ սկսում են շահագործել, ունի շատ առավելություններ, բայց ըստ ԵՓՄԻՀ-ի՝ գոյություն ունեն նաև պոտենցիալ ռիսկեր և թերություններ, որոնք պետք է հաշվի առնվեն մինչև իրավաբանները կսկսեն լիարժեք օգտվել դրանից:

Իր գրավոր դիրքորոշմամբ ԵՓՄԻՀ-ն ընդգծում է իր մտահոգությունները և այն խնդիրները, որոնք կապված են մի շարք հատուկ առաջարկությունների հետ՝ ապահովելու համար այդ համակարգերի վստահելի, արդար և արդյունավետ կիրառումը: Ամեն դեպքում, ԵՓՄԻՀ-ին մասնակցում է ԵՄ կառավարությունների հետ տվյալ ոլորտում հետագա զարգացումներին վերաբերվող քննարկումներին: Տես ավելին այստեղ (անգլերեն)՝ [http://www.ccbe.eu/fileadmin/user\\_upload/NTCdocument/EN\\_29112014\\_CCBE\\_Pos1\\_1417592218.pdf](http://www.ccbe.eu/fileadmin/user_upload/NTCdocument/EN_29112014_CCBE_Pos1_1417592218.pdf)



**ԵՓՄԻՀ-Ն ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է ՄԻԳՐԱՅԻԱՅԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ**

Միգրացիան համալիր և առանձնահատուկ խնդիր է, որը մտահոգություն է առաջացնում տարաբնույթ իրավունքների և օրենքների կիրառման վերաբերյալ:

Միգրացիայի վերաբերյալ հայտարարությամբ ԵՓՄԻՀ-ն կոչ է անում Եվրոպական Միությանը՝ երաշխավորելու միգրանտների իրավունքները և արժանապատվությունը, ներառյալ՝ դատարանների մատչելիությունը:

Առանձին փաստաթղթերում տպագրվող հատուկ ուղենիշները նպատակ ունեն աջակցելու միգրացիայով զբաղվող իրավաբաններին՝ ընդգծելով այդ ոլորտում առկա գլխավոր խնդիրներն ու մտահոգությունները: Տեսնել ավելին այստեղ (անգլերեն)՝

- [http://www.ccbe.eu/fileadmin/user\\_upload/NTCdocument/EN\\_29112014\\_CCBE\\_gui1\\_14175196\\_19.pdf](http://www.ccbe.eu/fileadmin/user_upload/NTCdocument/EN_29112014_CCBE_gui1_14175196_19.pdf)
- [http://www.ccbe.eu/fileadmin/user\\_upload/NTCdocument/EN\\_29112014\\_CCBE\\_decl\\_14175195\\_25.pdf](http://www.ccbe.eu/fileadmin/user_upload/NTCdocument/EN_29112014_CCBE_decl_14175195_25.pdf)



## ԵՄ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵՑԻՆ ԷԼ. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԸ

Նոյեմբերի 21-ին Անդամ Պետությունների Արդարադատության նախարարները հաստատեցին Էլ-արդարադատության գործողությունների պլանի 2014-2018թթ.-ի իրականացման ուղենիշները: Գործողությունների պլանը թվարկում է մի շարք ապագա ծրագրեր (փաստաթղթերի էլ-ծառայություն, կտակների գրանցման միասնական բազա, միմյանց միջև վիդեոկոնֆերանս) և կանխատեսում է տարեկան հանդիպումներ դատական համակարգի ներկայացուցիչների և իրավաբանների հետ, ներառյալ փաստաբանների՝ նպատակ ունենալով ուժեղացնել շահառուների և մասնագիտությունների միջև համագործակցումը: Եվրոպական էլ-Արդարադատության ամենաակնառու մասը Եվրոպական էլ-Արդարադատության պորտալն է, որն ունի «իրավաբանի որոնում» հնարավորությունը: Պորտալի ֆունկցիաների վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկատվություն կներկայացվի գալիք տարիների ընթացքում: Կարդալ ավելին այստեղ (անգլերեն)

<http://register.consilium.europa.eu/doc/srv?l=EN&f=ST%2015771%202014%20INIT>



## ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ ՄԱՍՆԱԿԻ ՀԱՄԱՁԱՅՈՒԹՅԱՆ ԵՆ ԵԿԵԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Դեկտեմբերի 4-ին Բրյուսելում կայացած Արդարադատության նախարարների հանդիպումը նոր համատեղ ճանապարհ է բացել տվյալների պահպանման կանոնակարգերի վերանայման համար:

1995թ.-ի ինտերնետային տարիքի համար տվյալների պաշտպանության կանոնակարգման թարմացման առաջարկը 2012թ.-ից սկսած առաջ է ընթանում կրեայի դանդաղությամբ, հիմնականում Անդամ Պետությունների և Եվրոպայի Խորհրդի պառլամենտական ասամբլեայի միջև առկա տարաձայնությունների պատճառով: Մասնակի տվյալների մշակման դրույթի վերաբերյալ փոխզիջումը բարելավում է փաստաբան-վստահորդ հարաբերությունների գաղտնիության պաշտպանությունը, այնուամենայնիվ զգուշությամբ հավելում է, որ «ոչինչ չի համաձայնեցված քանի դեռ ամեն ինչը համաձայնեցված չէ»՝ այսպիսին է Պառլամենտի գեկուցող Ջան Ֆիլիպ Ալբերիստի դիրքորոշումը, ով «վստահ չէ», որ համակարգերի միջև փոխզիջման կարելի է հասնել մինչև 2015թ.-ի վերջը: Կարդալ ավելին (անգլերեն)՝ <http://register.consilium.europa.eu/doc/srv?l=EN&f=ST%2016140%202014%20INIT>

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԵՐԺԵՅ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ  
ԴԱՏԱՐԱՆԻՆ ԵՄ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ**

Դեկտեմբերի 18-ին Լյուքսեմբուրգի դատավորները որոշեցին, որ ՄԻԵԴ-ին ԵՄ անդամակցության պայմանագրի նախագիծը չի համապատասխանում Եվրոպայի Միության օրենսդրությանը:

Թեպետ բոլոր Անդամ Պետությունները Կոնվենցիայի անդամներ են, 2007թ.-ի Լիսաբոնի դաշնագիրը Եվրոպական Միությանը իրավունք է տալիս ինքնուրույն անդամակցել Կոնվենցիային: Սույն որոշմամբ Դատարանը հակադարձեց Հանձնաժողովին, Նախարարների Խորհրդին և Եվրոպական Պառլամենտին: Կարդալ ավելին (անգլերեն)՝ <http://curia.europa.eu/juris/document/document.jsf?text=&docid=160929&pageIndex=0&doclang=en&mode=lst&dir=&occ=first&part=1&cid=296246>

**ԳԱԼԻՔ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**

**29-31/01/2015թ.** Բարսելոնայի փաստաբանների պալատի վերահաստատումը, Իսպանիա.

**12-14/02/2015թ.** Եվրոպական փաստաբանների պալատների նախագահների կոնֆերանս, Վիեննա.

**22/02/2015թ.** ԵՓՄԻՀ-ի մշտական հանձնաժողովի նիստ, Լոնդոն.

**23-25/02/2015թ.** Համընդհանուր իրավունքի գագաթնաժողով, Լոնդոն